

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

PUBLICATIONS

ПУБЛИКАЦИИ

ԳԻՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

ԱՆՆԱ ՄԱՐԻԱ ՄԱՏԱՐ

Լեյդենի համալսարան

ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ՄԻ ՆՈՐԱՅԱԾՑ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայերէն եւ հայկական գրքի ու մամուլի ընդհանրական մատենագիտութիւնների կազմութեանը զուգընթաց պարբերաբար տպագրուում են նաեւ ծաւալուն եւ փոքրածաւալ նորայայտ տպագրութիւնների մեծ ու փոքր ցանկեր¹, աւելին՝ Մաշտոցեան Մատենադարանի հայերէն ձեռագրերի Մայր ցուցակի կազմութեան ընթացքում պատառիկ-պահպանակների կամ ձեռագիր գրքերի մասերի ձեւով ի յայտ են գալիս ներկայիս դրութեամբ անյայտ, ընդհանրական մատենագիտութիւններում չարձանագրուած հրատարակութիւնների հատակտորներ²: Միով բանիւ, մեր տպագրութիւնների (գիրք, մամուլ, ո՛չ-գրքային հրատարակութիւններ) յայտնաբերման, մատենագիտական մշակումների եւ ուսումնասիրութիւնների աշխատանքը տեւական կամ մշտատեւ ընթացք ունի:

¹ Տե՛ս, օրինակ՝ Գեորգ Բամպոմբեան, «1801-1850 թուականներու միջեւ հայերէն եւ հայատառ թուրքերէն նորայայտ տպագրութիւններ», *Բազմավէպ*, 1991, Հ^մ 1-2, էջ 282-305, նաեւ՝ Լեւոն Մինասեան, «Հնատիպ մի Սաղմոսարան», *Բազմավէպ*, 1991, Հ^մ 1-2, էջ 306-307. հմտ. Մինասեան, «Հայերէն նորայայտ հնատիպ գիրքեր եւ մատենագիտական լրացումներ», *Հասկ հայագիտական տարեգիրք*, Նոր շրջան, Է-Ը. տարի՝ 1995-1996, Անթիլիաս-Լիբանան, 1997, էջ 543-595: Ի վերջոյ տե՛ս նաեւ այս գիրքը՝ նորայայտ գրքեր եւ պարբերականներ. «Հայ գիրք» եւ «Հայ պարբերական մամուլ» համահաւաք մատենագիտական ցանկերում չներառուած հրատարակութիւններ, Պրակ Ա., Կազմ.՝ Ստեռլա Պետրեան, Ռուբէն Ալեքսանեան, Խմբ.՝ Տիգրան Զարգարեան, Հայկանուշ Ղազարեան, Մայիս Գրիգորեան, Հայաստանի ազգային գրադարան, Երեւան, «Գիրք» հրատ., 2018, 128 էջ («Օգտագործուած գրականութեան ցանկ»՝ էջ 125-7):

² Առանց մանրամասներ պարզելու յիշենք միայն մի օրինակ. մեր Հ^մ 9134 ձեռագրի մէջ ձեռագիր ձեռագրացանկերի հետ միասին կան 1864, 1872, եւ 1879 թ. տպագրուած՝ տպագիր գրքերի առեւտրական ցուցակներ, որոնք արձանագրուած չեն ընդհանրական հետեւեալ մատենագիտութեան մէջ՝ «Հայ գիրքը 1851-1900 թուականներին», «Գիրք» հրատ., Երեւան, 1999, ԽԵ., 860 էջ»: Յիշենք, որ այստեսակ գրացուցակներն անյայտ մնացած հրատարակութիւններ որոնելու լաւ մեկնակէտեր են:

Այս իրողութեան հէնքի վրայ է դիտելի հետեւեալ փաստը. 2019 թ. յուլիսի 23ին Աննա Մարիա Մատարը Հաագայի արքայական գրադարանի հայերէն հնատիպ գրքերի ուսումնասիրութեան ժամանակ մի գրքի մէջ տեսել է չափերով եւ այլ յատկանիշներով նոյն գրքի հետ կապ չունեցող 4 էջանոց մի տպագրութիւն: Հայկական գրադարանային կենտրոններ ուղարկած հարցումներով փորձել է պարզել, թէ կա՞ն արդեօք նոյնի այլ օրինակներ, սակայն փնտրտուքը դրական արդիւնք չի տուել: Ուստի որոշեցինք հրատարակել փոքրածաւալ եւ ըստ երեւոյթին փոքր քանակով արուած այդ տպագրութիւնը, որ գրուած է ժամանակի ոճով ու ձեւակերպումներով եւ Ամստերդամում հայկական եկեղեցի կառուցելու համար անհրաժեշտ միջոցների հանգանակութեանը մասնակցելու շրջաբերական յորդոր է ուղղուած համայն հայութեանը:

Այս եւ այլ փաստերի հիման վրայ ենթադրելի է, որ հայկական բոլոր տպագրավայրերում, գուցէ թէ բոլոր ժամանակներում, առօրեայ խնդիրների առիթներով եղել են ազգագրերի, յայտարարութիւնների, հրաւիրատոմսերի, միջոցառումների ծրագրերի եւ նմանիքի «մանր» կամ «ո՛չ-գրքային» կոչելի տպագրութիւններ, որոնց տպաքանակները փոքր են եղել եւ որոնք տարածուել են հիմնականում նոյն տպագրավայրերում: Առօրէական-անցողիկ խնդիրների վերաբերելով, սրանք նաեւ նոյն խնդիրների կամ միջոցառումների աւարտից յետոյ անկարելորդ են համարուել ու չեն պահպանուել կամ սակաւ դէպքերում եզակի օրինակներ պէտք է պահպանուած լինեն նոյն վայրերի դիւանական (արխիւային) հաստատութիւններում³: Նորայայտ շրջաբերականը պէտք է համարենք այդտեսակ մի տպագրութիւն:

Երկծալ՝ 2 թերթանոց, առանց էջահամարների այս տպագիրը գտնուել է 1714-1715 թթ. Դուկաս Վանանդեցու Ամստերդամի տպարանում հրատարակուած Սաղմոսարանի⁴ մէջ: Վերջինս Հաագայի Արքայական գրադարանում ունի «KW 488 F 16» գոյքահամարը, նախկինում պատկանել է Օրան-Նասաուի արքայազնին. տիտղոսաթերթի դարձերեսին կա՝ Ex libris (հայերէն՝ «Ի

³ Կարծում ենք՝ նոյնպիսի հրատարակութիւններ պէտք է ուշի ուշով փնտրել եւ գտնել մեր տպագրավայրերի դիւանական հաստատութիւններում:

⁴ Հայ գիրքը 1512-1800 թուականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն, [կազմեցին] Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սալպեան, առաջաբանը Ն. Ա. Ոսկանեանի, խմբագրութեամբ Ռ. Ա. Իշխանեանի, Երեւան, 1988, էջ 211-212, Հ^մ 287. «ԳԻՐՔ / ՍԱԳՄՈՍԱՅ: / ՏՊԱ-ԳՐԵՅԵԱԼ Ի / Հայրապետութեան Տեառն / Աղեֆսանդի / ամ[եկայն] Հայոց Կաթողիկոսին էջմիածնի: / ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1714: / Ի ՄԵՐ ԹՈՒԻՆ 1163.: / Ըն Տպարանում Դուկասու / Դպրի Վանանդեցու: / ՅԱՄՍՏՐԻԱՄ. - 838 զարդափակ էջ: Ուրծալ, մամուկանիշեր հայատառ եւ արաբական թուանշաններով: Գրադաշտը շրջանակով՝ 12,5×7,4 սմ: Տիտղթ.՝ զարդափակ: 150 փորագիր պատկեր, գլխազարդեր, վերջազարդեր, զարդագրեր եւ լուսանցազարդեր: Բնագիրը 16 կէտաչափի բոլորագրով, օգտագործուած են նաեւ գլխագրեր եւ նոտագիր» (թերթի մեծութիւնը՝ 16×10 սմ, կազմը՝ 16,7×10,5). այսումնետե՛ն՝ Հայ գիրքը 1512-1800 թթ.:

գրեանց»), հետեւեալ շարադրանքով. «AD / BIBLIOTHECAM / PRINCIPALEM / ARAVSIIO-NASSAVIENSEM/ DILLENBVRGICAM»: Մեր նորայայտ տպագրի հրատարակութեան տարին եւս նոյն՝ «յԱմի Տեառն 1714»ն է եւ հայոց՝ «Թիւ մեր 1163. Յունվար 1»ը:

Սաղմոսարանի թերթի մեծութիւնը՝ 16×10 սմ է, կազմի չափսը՝ $16,7 \times 10,5$ սմ, շարուածքը կամ գրադաշտը, շրջանակով $12,5 \times 7,4$ սմ: Ի տարբերութիւն սրա՝ մեր շրջաբերականի թերթի չափսը 18×15 սմ է, գրադաշտը՝ $17 \times 13,2$ սմ: Ըստ այսմ՝ շրջաբերականը Սաղմոսարանի մէջ դրուել է պատահմամբ, ո՛չ յատուկ նպատակով, գուցէ՝ որովհետեւ տպագրուել է նոյն տարում եւ նոյն տպարանում:

Ամստերդամի եւ ընդհանրապէս Հոլանդիայի հայ համայնքին, այս տարածքում ապրած հայոց կենցաղավարութեանը եւ տնտեսական-մշակութային գործունէութեանը վերաբերող բաւականաչափ գրականութիւն⁵ կայ, կան նաեւ Ամստերդամի Սուրբ Հոգի հայկական եկեղեցու մասին պատշաճ անդրադարձներ⁶: Այդ շարքում մեր խնդրի համար կարեւորագոյնը Առաքել Սարուխանի՝ հոլանդահայոց վերաբերող արժէքաւոր աշխատութիւնն է, որի մէջ բաւական հանգամանօրէն ներկայացուած են Ամստերդամի հայոց Սուրբ Հոգի եկեղեցու հիմնարկութեան մանրամասները. «Հայ վաճառականների աւագագոյն անդամներն, որոնք աղօթարանի աթոռակալներն էին, Պապաջան Սուլթանեան եւ Նիկողայոս Թէոդորեան...» դիմել են Ամստերդամի քաղաքապետներին, ի պատասխան՝ քաղաքային վարչութիւնը 1713 թ. հոկտեմբերի 26ի որոշումով արտօնել է, «որ նրանք այս քաղաքում մի տուն գնեն եւ եկեղեցիի վերածեն»: Սրա հիման վրայ մեր վաճառականները «քաղաքի այն ժամանակի կենդրոնում մի շէնք գնեցին որ ապրանքի շտեմարան էր, քանդեցին բոլորովին եւ եկեղեցու հանգիստւոր հիմնարկութիւն կատարեցին»⁷: Սուրբ Հոգի եկեղեցու հիմնադրմանը եւ հետագայ պատմութեանը վերաբերող մանրամասները⁸ կրկնելու հարկ չունենք, միայն

⁵ Տե՛ս, օրինակ՝ Կարապետ վ. Շահնազարեանց, «Ամստերդամի հայոց եկեղեցին», Արշալոյս արարատեան, 1860, Հմբ 632, էջ 1-3. Յարութիւն Տէր-Յովնանեան, «[Առ] յարգոյ վերատեսուչ Արշալոյս արարատեան», Արշալոյս արարատեան, 1861, Հմբ 650, էջ 1-3: Մեր խնդրին անուղղակի աղբյուրող ենք համարում հետեւեալները՝ Առաքել Սարուխան, Բելգիա եւ հայերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1937, ԺԸ., 253 էջ (Ազգային մատենադարան ձև. Գ.). Գեորգ Մինասեան, Բելգիան եւ հայերը. III դարից մինչեւ մեր օրերը, Երեւան, Հեղինակային հրատ., 2016, 369 էջ:

⁶ Որպէս օժանդակ նիւթ տե՛ս մեր երբեմնի ուսանող՝ արուեստաբան Լիլիթ Կարապետեանի համազանցային հրապարակումը՝ «Հոլանդիայի Սուրբ Հոգի եկեղեցու պատկերաբանդակի ֆնոնքիւնը եւ զուգահեռները».- <http://arvestagir.am/am/holandiaiyi-sb-hogi-ekeghecupatkerakhandaki-khnuthyunch-ev-zugahernereh/> (10 դեկտ. 2021 թ.):

⁷ Առաքել Սարուխան, Հոլլանդան եւ հայերը ժԶ., ԺԹ. դարերում, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1926, (Ազգային մատենադարան ձժ.Գ.), էջ 149-50:

⁸ Տե՛ս նոյն տեղում, էջ 146-173, նաեւ՝ էջ 59-60 (ամբողջ գիրքը՝ 196 էջ):

ասենք, որ նորայայտ շրջաբերականը նախաձեռնող եւ ստորագործողներն արդէն յիշատակուած «Սուլթանումի որդի Բաբաջանը եւ Թէոդորոսի որդի Նիկողոսն»⁹ էին: Նրանք Ամասերդամի հայութեան միակամ ցանկութեամբ «կարգեալ հաստատեցան Հոգաբարձութեւ, Վերակացութեւ եւ Գործակալք այս եկեղեցաշինութեանս»: Ըստ այդմ եւ իրենց շրջաբերականում յայտնել են, որ Ամասերդամում՝ «աստ եղեալ Արամագնեայ սակաւաթիւ վաճառականքս ինքնայոժար կամօք ի մէջ եղաք աւելի քան զեօթն հազար գուղիս», ապա յորդորել են՝ «ով ոք յօժարակամ սրտիւ ընդ այս դիտաւորութիւն բոլորապըտող նուէր ինչ կամիցի մատուցանել՝ առ ի գտանել զպատուական մարգարիտն... գրեսցէ զանուն իւր եւ զքանիս տրոցն, եւ առաքեսցէ այսր՝ յ'Ամասերդամ, ի ձեռս Սուլթանումի որդի Բաբաջանին եւ Թէոդորոսի որդի Նիկողոսին, որք զանուանս եւ զնուէրս Պտղաբերացն գրեսցեն ի Կոնտակի՝ յանմահ յիշատակ պտղաբերացն»:

Գրեթէ վստահ ենք, որ այս խոստումն իրագործուել է, այսինքն՝ նուիրատուների եւ նրանց նուիրած դրամի շափը կամ իրերի (եկեղեցական սպասք, ձեռագիր եւ տպագիր գրքեր եւ նմանիք) անունները գրանցուել են յատուկ «Կոնտակ»-ի՝ եկեղեցու հիմնական մատեանի կամ Ընծայամատեանի¹⁰ մէջ, որ շատ հաւանաբար պէտք է պահպանուած լինի Ամասերդամի քաղաքային ինչ-որ արխիւում¹¹ եւ մի օր յայտնաբերուելով ու հրատարակուելով, աւելի ճշգրիտ տեղեկութիւններ է տալու 1714 թուականից յետոյ Սուրբ Հոգի եկեղեցու ստացած նուէրների, գոյքի ու եկեղեցական սպասքի մասին:

* * *

Շրջաբերականի այս տպագրութիւնը համարում ենք դիւանականի հաւասարարժէք փաստաթուղթ, ուստի եզակի օրինակով պահպանուած լինելը նկատի ունենալով, այն հրատարակում ենք թէ՛ բնագրային եւ թէ՛ լուսանկարային¹² վերարտադրութեամբ:

Առաջին էջում այլ տպագրութիւններով յայտնի՝ «Յեսսէի ծառը կամ Յիսուս Քրիստոսի ազգաբանութիւնը» փայտափորագիր նկարն է: Հաւատացած լինելով, որ մեր հնատիպ հրատարակութիւնների մէջ առկայ փայտափորագիր տպատախտակների ընդհանուր նկարագրական ցանկ եւ նրանց բազմակի օգտագոր-

⁹ Անունների համեմատ՝ սրանք հաւանաբար նորջուղայեցի էին: Ի դէպ, Վանանդեցիների տպագրած գրքերի յիշատակարաններում այս մարդկանց անունները չկան:

¹⁰ Մշակում եւ հատորային հրատարակութեան ենք պատրաստում մեր վաճմեթի ու եկեղեցիների այսպիսի ֆանից աւելի մատեան. մի նմուշը տե՛ս **Գէորգ Տէր-Վարդանեան**, «Վեներիկի հայոց Սուրբ Խաչ եկեղեցու ընծայամատեանը», *Էջմիածին*, 2013, ժԱ., էջ 60-83:

¹¹ Կամ Ս. Էջմիածնում, ուր եկեղեցու փակուելուց յետոյ տեղափոխուել է նրա ծիսական սպասքը, գուցէ այդտեղից եկեղեցու արխիւն էլ հետագայում անցած լինի մեր պետական դիւանական ինչ որ հաստատութեան:

¹² Շրջաբերականի՝ այստեղ տպագրուող բարձրորակ լուսանկարները Հաագայի Արքայական գրադարանը պատրաստել է Աննա Մարիա Մատարի խնդրանքով:

ծումների համադիր պատկեր կազմելը մօտ ապագայում իրագործելիք գիտական կարեւոր խնդիր է, աւելորդ կամ անտեղի չենք համարում այստեղ «Յեսսէի ծառ»ի տպագրութիւնները¹³ ներկայացնելը.

1. Շարակնոց, 1664-1665 թթ., Ամստերդամ, տպ. Կարապետ Անդրիանացու եւ Ոսկան Երեւանցու, էջ 11:

2. Աստուածաշունչ, 1666-1668 թթ., Ամստերդամ, տպ. Ոսկան Երեւանցու, երկրորդ էջակալման էջ 431¹⁴:

3. Շարակնոց, Ամստերդամ, տպ. Թովմաս Վանանդեցու, 1702-1703 թթ., էջ 11:

4. Շարակնոց, 1712 թ., Ամստերդամ, տպ. Ս. Աստուածածնի, էջ 11:

5. Շարակնոց, 1718 թ., Ամստերդամ, տպ. Ս. Աստուածածնի, էջ 11¹⁵:

6. Աւետարան, Պոլիս, 1710 թ., էջ 252:

7. Ձայնքաղ Շարակնոց, 1743 թ., Կոստանդնուպոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու, էջ 6. բուսա-ծաղկային բարդ զարդաշրջանակի մէջ¹⁶:

Առաջին եւ 3-5րդ տիպերի մէջ նկարը ստորին լուսանցներում խորագրուած է. «Յերկոտասան նահապետաց շառաւիղեալ մայրն կենաց» (2րդը անխորագիր է): 1-5՝ նկարների ստորին ձախ անկիւնում ստորագրութիւն՝ *CvS = Քրիստոֆէլ վան Զիխեմ*: Գրադաշտի կամ տպադաշտի չափսերը (սմ). 1. $12 \times 7,2$, 2. $21 \times 14,7$ (նկարը՝ Շարակնոցում եղածի չափսի է), 3. $12,7 \times 7,2$, 4. $12,7 \times 7,2$, 5. $12,5 \times 7,6$ ¹⁷:

Վեցերորդի եւ եօթերորդի մէջ այլ տպատախտակ է, հեղինակայինի անհարգատ պատճէնը. *CvS* ստորագրութեան փոխարէն նոյն անկիւնում կայ *ԳՄ = Գրիգոր Մարգուանեցի*. Երգում նկարն անխորագիր է, 7րդում՝ «Նահապետացն

¹³ Մասնց անուանացանկն ստացել ենք մեր աշակերտ եւ կրտսեր գործակից Արփինէ Սիմոնեանից, որ վերջերս պաշտպանել է Վանանդեցիների տպագրութիւնների գեղարուեստական յարդարանքին վերաբերող շատ արժեքաւոր ատենախօսութիւն-ուսումնասիրութիւն:

¹⁴ Չորս ատետարանիչների նոյնէջեայ նկարի յաջորդ էջում՝ Մատթեոսի Աւետարանի բնագրի սկզբում, բուսա-ծաղկային ճոխ զարդաշրջանակի մէջ: Սրա մասին տե՛ս *Ոսկանեան Աստուածաշնչի պատկերները*, Նկարների մեկնաբանութիւնները *Արփինէ Սիմոնեանի*, Խմբագրութամբ եւ առաջաբանով *Գէորգ Տէր-Վարդանեանի*, Ս. Էջմիածին, 2017, էջ 55-6 (տիպոդսաքերթի վրայ անհարկի՝ «Գրի մտայղացումը Տ. Արարատ Բանանայ Պօղոսեանի»):

¹⁵ Գրէրի նկարագրութիւնները՝ *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, 1. էջ 41-43՝ Հնատիպ Հ^մ 55: 2. էջ 44-50՝ Հնատիպ Հ^մ 58: 3. էջ 145՝ Հնատիպ Հ^մ 199: 4. էջ 195՝ Հնատիպ Հ^մ 268: 5. էջ 226-7՝ Հնատիպ Հ^մ 305: 3-5րդ Շարակնոցներն առաջինի պատկէններն են:

¹⁶ Նկարագրութիւնները՝ *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, 6. էջ 184-5՝ Հնատիպ Հ^մ 252: 7. էջ 3758-6՝ Հնատիպ Հ^մ 472:

¹⁷ Չափսերն առել ենք մատենագիտութիւնից՝ *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, հաւանական է՝ տարբերութիւնները լինեն երբեմն տարբեր կերպ չափած լինելու հետեւանք:

Աբր[ահամու], Իսահ[ակայ] եւ Յակ[ոբու]. 10», 6րդի տպադաշտը՝ 13×8 սմ, 7ինը, շրջանակով $20,9 \times 14$ սմ:

Մեր տպագիրը այս շարքում ժամանակագրորէն 4րդի եւ 5րդի միջեւ է. այստեղ նկարը չորս կողմից եզերուած է երկտողերի 1-5 համարակալմամբ¹⁸ չափածոյով. ենթագրելի է, որ թէ՛ նկարը եւ թէ՛ չափածոյի շարագրանքը Քրիստոսեկեղեցի նոյնութեան հիմքի վրայ նախապատրաստում-հիմնաւորում են Ամստերդամի հայկական եկեղեցու կառուցմանը նպաստելու գաղափարը:

ԲՆԱԳԻՐԸ

Բնագիրը վերարտադրել ենք նոյնականութեան սկզբունքով՝ չափածոն տողատուած, նաեւ պահպանել ենք տպագրի կէտադրութիւնը եւ գլխատառերը, համառօտագրութիւնները բացել ենք առանց փակագծային ձեւերի, արձակ մասում կիրառել ենք տողափոխի նշանը՝ /. յաջորդող խորագիրը բնականաբար մեր նշանակածն է, տպագրի «Թուղթ յորդորական» անունը մակաբերել ենք շարագրանքի սկզբի՝ դիմումի մասից:

ԹՈՒՂԹ ՅՈՐԴՈՐԱԿԱՆ. Ամստերդամ, տպ. Դուկաս Վանանդեցու, 1714, 4 էջ. գրադաշտը՝ $17 \times 13,2$ սմ (թերթերը՝ 18×15 սմ)

[էջ 1]. [նկար՝ Քրիստոսի տոհմաձառը]

1 Եսաւ պատկեր Հրէիցն եղեալ,

ուստի Փրկիչն մեր է ցեղեալ՝

2 Սա ընդ Յակօբ օրինակեալ.

որ ըզգեստիւմ եղբօրն օրհնեալ:

3 Եսաւ երէցն խոտան գրտեալ.

զի զօրհնութիւն հօրն շընկալեալ:

4 Սապէս Հրէայն անդրանկացեալ.

Փրկչին շնորհացն բայց ոչ հասեալ:

5 Փրկիչն ընդ Մօր օրհնաբանեալ.

Ի Յակօբայ շառաւիղեալ:

¹⁸ Չափածոյիս 1 նշանով երկտողը նկարի ստորին, 2ը՝ ձախ, 3ը՝ աջ, 4ը՝ վերին եւ 5ը՝ կրկին ստորին լուսանցներում են:



ԱՄՕՐԻՆ, ԵՒ ԻՐԱՔԱՆՁԻՐ ԵՌԱՆՁԻՆ ԵՐԵ ՄԵԼՆ ՏՈՀՄԻՆ ԵՐԻՑՍ ԵՐԱՆԵԱԼ ՀՈՎՈՒԱԳԵՏԱՅ, ԵՌԱՓԱՅԸ Ե

պիսկոպոսաց, Հորհաղարդ Ա արդապետաց, Երկնա
հրաւեր Վահանայից, ձգնուամիտ իշխանաց, պերճապատիւ Գօզ
լաթաւորաց, բարեպաշտ Ա աշառականաց, խելամուտ Լըհետաւ
որաց, և առհասարակ նմ ի Վ Ե հաւատացեալ լուսաւորչական
հօտին, և հօտապետայն. մեծամեծաց և փոքունց, ի Վայրաբա
ղաբս և ի Գիւղաբաղաբս, կամ յայլուրեք բնակելոյն. Լմենե
ցուն միահաղոյն, որք զայս յորդորական լուսաւորչա
նութեանուն, կամ զւորին ընթեռնուն լսեն.
Ողջոյն, և Սէր Վ. Ծաւանդ, Սաղա
ղութին յ'Մ. Զօրէ մերմէ.
ըստ իւրաքանչիւրոյ հասակի, աստիճանի, և դասու.



ՆԵՐԿԻՆՅԱՆ ԻՄՆ ԻՅԵՒ ՄԵՆԵՆՆՈՒՐԵՎ ԳՈՅ ՏԵՐՈՒ

ԹԻԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ. ՈՒՐԵՄՆ ԵՒ
յնմ տեղիս արժան իսկ է կալ յաղօթս առ Տէր հոգւով
և Զմայրութեամբ. զսէ ձեռս ի վեր բառնալով առանց երկմտու
թէ. 1 ՏԵՒ. 2. 8. Ի այց' ուր ի հաւան անտեղի իմէ եր' զոհս
մատուցանել արտաքոյ Տաճարին Երուսաղէմի. նոյնպէս և ի Նոր
ուսմ անարժան իմն է արտաքոյ Սէր Երեմիայի մատուցանել զՍ. մե
նասուրբ Պատարագն. որ է Լըհետաւական, Վահանայի հաշ
տաւ

տարար, և յաղաղարար պաշտօն առ լ' ստուած։
 Գրէ Սէն Կրկեղ Լ' շէկսանդրացին. Պլ' տարագն' զոր խորհր
 դաբար հաշակեմք՝ պարտ է զի մատուցի միայն 'ի սք Լ' կեղեցիս
 Ուղղափառաց, և ոչ ամենեւին յայլուրէք. որք այլանցս առնեն
 յայտնապէս խախտեն զօրէնս։ Ուրեմն՝ հարկէ սակս' զՊա
 տարաբէն ունիլ զառանձին, և զհանդիսական տեղի. ուր հաւա
 տացեալքն անգամանգամ 'ի մի վայր ժողովեալ՝ միաբան հանգերձ
 Բահանայիւ կատարիցեն զփրկարար խորհուրդ' որ Պատարաբէն
 առ 'ի քառնութի մեղաց համօրէն հաւատացելոյն, լ' ստորում բարե
 պաշտասէր, հարաղատամիա՝ և բազում գովութեց' արժանի աղքատ
 մեր հայոց յամ տեղիս՝ ուր բնակին կամ յաճախեն, ունին միշտ
 ինքեանց առանձին պայծառատեսիլ եկեղեցիս 'ի պատիւ Սք Պա
 տարաբէն. նոյնպէս և անտ յ'այսմ լ' մտորդամբաղաքի յառաջ
 զտանվեց ամ մերազնեայքս ինքնայօժար կամօք կամեցան շինել ին
 քեանց հաստահիմն եկեղեցի. բայց յ'այլևայլ պատճառէ, և պա
 տահմանէ մինչև ցայսօր յառաջեղեալ գործն յետացաւ։
 ԲՍՏԵՆՈՐ մեք աստ 'ի մեծազօր, և համբաւահաշակ լ' մն
 տրդամ քաղաքի եղեալ հայքս՝ ըստ բարեհաճութեն հոգւոյն
 Սրբոյ, որով եմք՝ կեամք և շարժիմք յաճախեալ՝ և բազմացեալ
 համախոհ հաւանութեք բարձր վարկաք կանգնել և արձանացու
 ցանել յ'այսմ ծովապարփակ, և հարստալաճառ քաղաքումս զա
 ռանձին, և հաստահիմն Լ' կեղեցի 'ի փառս լ' մնասք Լ' բորորդու
 թեն, 'ի պարծանս Լ' ուսաւորչի Սք լ' թուոյն, և 'ի հոգեշահ
 պայծառութիւն Լ' ուսաւորչադաւան հօտին 'ի մէջ ոյսքան չքնաղա
 նուն ազգացս, որք են անտ յ'այսմ քաղաքի. ևս 'ի մէջ ծայրածա
 ալ վաճառատեղեաց, ի՞նչ որս ունիմք յամուրեք երթեկութիւնս։
 Լ' սու գիտաւորութեամբ աստ եղեալ լ' րամաղնեայ սակաւա
 թիւ վաճառականքս ինքնայօժար կամօք 'ի մէջ եղաք աւելի քան
 զեօթն հազար գուլդիս, և հրամանաւ մեծազօր իշխանացն քաղա
 քիս ըսկիղեն արարեալ՝ ձեռնարկաք շինել զվաղեմեայ փափա
 գեալ Լ' կեղեցին՝ զարդարուն իբրև զհարսն Լ' ուսոյ։
 Լ' բ' Գ. ազնուապատիւ՝ և բարգաւաճեալ Տեաք՝ սիրելի և հա
 մազնեայ եղբարք, որք ընդ մեզ ընկալեալ էք զծուծիւն հոգւոյն
 Սքոյ՝ ոն ազգայինք մեր՝ և համակարիք, արդիւնաւոր ձեռնտու
 թեք, և զօրաւոր հաղորդութեք լեռնք ընդ մեզ հաղորդ՝ և կրցորդ
 այսմ լ' ծախայելու Լ' կեղեցաշինութե գործոյս. որով և դուք ար
 գիւնս

գիւնորէն հաղորդ՝ և կցորդ լինիցիք հոգևոր բարեացն, որք աստ կատարին: Վանգի ասէ փրկիչն հանուրց. Տուք, և տացի ձեզ. չափ բարձրք՝ թաթաղուն՝ շարժուն՝ և զեղուն տալին ՚ի գոգս ձեր. նովին չափով՝ որով չափէք՝ չափեսցի ձեզ: Պատկառ 6. 38: Եւ որ սկէս ՚ի գործ խորանի Սկայութեն իւրաքանչիւրք բերէր հաս՝ և պտուղ ըստ կարի՝ և յօժարութե սրտի իւրոյ. հարուստքն զակունս պատուականս՝ ոսկի՝ և արծաթ. Եւ յլքն պղինձ՝ փայտ՝ թել՝ մորթի՝ մազ՝ իւղ՝ և խունկ: Եւ յլից 35. 23: Սպէս և ս հարազատամիտ բարե պաշտութի ձեր լը կարի՝ և յօժարութե սրտի ձերոյ լը մեզ ձեռնտու լերուք՝ զի հաստատիցի աստ Եկեղեցի մի՝ իբրև հարսն Վի ՚ի հան գերձս ոսկէ հուռս զարդարեալ՝ և պաճուճեալ. ՚ի միսիթարութիւն աստ գտեալ մերազնեայ ժողովրդեանս:

Եւ ի՛նչ որ յօժարական սրտիւ լը այս գիտաւորութիւն բողոքապը տուղնուէր ինչ կամիցի մատուցանել առ ՚ի գտանել զպատուական մար գարնան. և զԵ. անձին իւրում բարեկամաւուն՝ գրեսցէ զանուն իւր, և զքանիս տրոցն, և առաքեսցէ այսր յՍ. մատրդամ ՚ի ձեռս Սուրբանու մի որդի Քաբաջանին, և թէ որդորոսի որդի Նիկողոսին. որք զանուանս, և զնուէրս Ստղաբերացն գրեսցեն ՚ի Ստղաբերացն մահ յիշատակ պտղաբերացն:

ՎԵՆԵՐԱՆՈՒ աստ եղեալ հայկազնեայ ժողովրդեան հաւասար հաւանութեն, և միաբան հաճութեն վերագեալ Քաբաջանն և Նիկողոսն կարգեալ հաստատեցան հոգաբարձուք՝ Սեբակացուք՝ և յորժակալք այս Եկեղեցաշինութեանս. որք և զայս յորդոր կան՝ և հրաւիրական թուղթս հաւանուր աստ եղեալ մերազնեայ անուանի վաճառականացն Ձեր Բարեպաշտութեդ յանդիման կացուցանեն:

Ողջ լերուք:

ՅՍ. մատրդամ. ՅՍ. մի ՏՆ 1714:

Թիւ մեր 1163. Յունվար 1:

Սաճառականն մամմնայ	ին.
երբ է խոհեմ ըստ վաճա	ռին.
զաւազն փոխէ ընդ մարդար	տին.
ըզ շարժելին ընդ անշար	ժին:

|էջ 2| ՀԱՄՕՐԷՆ, ԵՒ / ԻԻՐԱՔԱՆՁԻԻՐ ԱՌԱՆՁԻՆ ԱՐԱ/ՄԵԱՆ ՏՈՀՄԻՆ ԵՐԻՑՍ / ԵՐԱՆԵԱԼ ՀՈՎՈՒԱՊԵՏԱՑ, ԵՌԱՓԱՅԼ Ե/պիսկոպոսաց, Շնորհա-
գարդ Վարդապետաց, Երկնա/հրաւր Քահանայից, ազնուամիտ Իշխանաց,
պերնապատիւ Դօվ/լաթաւորաց, բարեպաշտ Վանառականաց, խելամուտ
Արհեստաւ/որաց, Եւ առ հասարակ ամենայն ի Քրիստոս հաւատացեալ Լու-
սաւորչական / Հօտին, Եւ Հօտապետացն. մեծամեծաց՝ Եւ փոքունց, ի Մայ-
րաբա/ղաբա Եւ ի Գիւղաբաղաբա, կամ յ՝այլ ուրեք բնակելոցն. Ամենե/ցուն
միահաղոյն, որք զայս յորդորական Թուղթս / ընթեռնուն, կամ զսորին ըն-
թեռնոյն լսեն. / Ողջոյն, Եւ Սէր Քրիստոսաւանդ, Խաղա/ղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ. / ըստ իւրաքանչիւրոյ հասակի, աստիճանի, Եւ դասու:

ԱՆԵՐԿԲԱՅ ԻՄՆ Է՝ Յ՝Ա/ՄԵՆԱՅՆ ՈՒՐԵՔ ԳՈՅ ՏԷՐՈՒ/ԹԻԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՒ-
ԹԵԱՆՆ. ՈՒՐԵՄՆ ԵՒ / յամենայն տեղիս արժան իսկ է կալ յ՝աղօթս առ Տէր
հոգւով / Եւ նշմարտութեամբ. զսուրբ ձեռս ՚ի վեր բառնալով առանց երկմ-
տու/թեան: 1 ՏԷ՛՛՛ 2՝ 8¹⁹: Բայց՝ որպէս ՚ի հնումն անտեղի իմն էր՝ զոհս / մա-
տուցանել արտաբոյ Տանարին Երուսաղէմի. նոյնպէս Եւ ի Նոր/ումս անար-
ժան իմն է արտաբոյ Սուրբ եկեղեցւոյն մատուցանել զԱմե/նասուրբ Պատա-
րագն. որ է Ընդհանրական, Քաւչարար՝ Հաշ|էջ 3|տարար, Եւ Խաղաղարար
պաշտօն առ Աստուած:

Գրէ Սուրբն Կիրեղ Աղեկսանդրացին. Պատարագն՝ զոր խորհր/դաբար
հռչակեմք՝ պարտ է զի մատուցի միայն ՚ի սուրբ եկեղեցիս / Ուղղափառաց,
Եւ ոչ ամենեւին յայլ ուրեք. որք այլապէս առնեն՝ / յայտնապէս խախտեն զօ-
րէնս: ՈՒՐԵՄՆ՝ հարկ է սակս սուրբ Պա/տարագին ունիլ զառանձին, Եւ զհան-
դիսական տեղի. ուր Հաւա/տացեալքն անգամ անգամ՝ ի մի վայր ժողովեալ՝
միաբան հանդերձ / Քահանայի կատարիցեն զփրկարար խորհուրդ սուրբ
Պատարագին / առ ի փառքին մեղաց համօրէն Հաւատացելոցն: Ըստ որում
բարե/պաշտասէր, հարազատամիտ՝ Եւ բազում գովութեանց արժանի ազգս
/ մեր հայոց յամենայն տեղիս՝ ուր բնակին կամ յանախեն, ունին միշտ / ին-
քեանց առանձին պայծառատեսիլ եկեղեցիս ՚ի պատիւ Սուրբ Պա/տարա-
գին. նոյնպէս Եւ ա՛ստ յ՝այսմ Ամստորդամ փաղափ յառաջ փան / զտասնվեց
ամ մերազնեայս ինքնայօծար կամօք կամեցան շինել ին/քեանց հաստա-
նիմն եկեղեցի. Բայց յ՝այլեւայլ պատճառէ, Եւ պա/տահմանէ մինչեւ ցայսօր
յառաջեղեալ գործն յետացաւ:

ԱՍՏԱՆՈՐ մեք աստ ի մեծագօր, Եւ համբաւահռչակ Ամս/տորդամ փաղափ
եղեալ Հայքս՝ ըստ բարեհանութեանն Հոգւոյն / Սրբոյ, որով եմք՝ կեամք Եւ
շարժիմք յանախեալ՝ Եւ բազմացեալ՝ / համախոն հաւանութեամբ բարւոք

¹⁹ Հմմտ. «Կամիմ զի արք կայցեն յաղապս յամենայն տեղիս, բառնայցեն զսուրբ ձեռս ի վեր
առանց բարկութեան Եւ երկմտութեան»:

վարկաբ կանգնել եւ արձանացու/ցանել յ'այսմ ծովապարփակ, եւ հարստավանառ փաղափումս զա/ռանձին, եւ հաստահիմն եկեղեցի՝ ի փառս Ամենասուրբ Երրորդու/թեանն, ՚ի պարծանս Լուսաւորչի Սուրբ Աթոռոյն, եւ ՚ի հոգեշահ / պայծառութիւն Լուսաւորչադաւան Հօտին ի մէջ այսփան չֆնաղա/նուն ազգացս, որք են աստ յ'այսմ փաղափի, եւս ի մէջ ծայրածաւ/ալ վանառատեղեաց, ընդ որս ունիմք յամենայն ուրեք երթեւեկութիւնս:

ԱՅսու ղիտաւորութեամբ աստ եղեալ Արամազնեայ սակաւ/թիւ վանառականֆս ինֆնայօծար կամօք՝ ՚ի մէջ եղաք աւելի ֆան / զեօթն հազար գուղիս, եւ հրամանաւ մեծագօր իշխանացն փաղա/ֆիս ըսկիզբն արարեալ՝ ձեռնարկաբ շինել զվաղեմեայ փափա/գեալ եկեղեցին՝ զարդարուն իբրեւ զՀարսն Լուսոյ:

ԱՐԴ՝ ազնուապատիւ՝ եւ բարգաւանեալ Տեարֆ՝ սիրելի եւ հա/մազնեայ եղբարք, որք ընդ մեզ ընկալեալ էք զօծութիւն Հոգւոյն / Սրբոյ՝ որպէս ազգային մեր՝ եւ համակարիք, արդիւնատու ձեռնատու/թեամբ, եւ զօրատու հաղորդութեամբ լերուք ընդ մեզ հաղորդ՝ եւ կրցորդ / այսմ Աստուածավայելուչ եկեղեցաշինութեան գործոյս. որով եւ դուք արեւ 4 ղիւնօրէն հաղորդ՝ եւ կցորդ լինիցիք հոգեւոր բարեացն, որք աստ / կատարին: Քանզի ասէ Փրկիչն հանուրց. Տոք, եւ տացի ձեզ. / չափ բարոք՝ թաթաղուն՝ շարժուն՝ եւ զեղուն տացին ՚ի գոգս ձեր. / նովին չափով՝ որով չափէ՝ չափեսցի ձեզ: Դ՝-Կ՝-Ե՝ 6. 38²⁰: Եւ որ/պէս ի գործ խորանի Վկայութեանն իւրաքանչիւր ոք բերէր հաս՝ եւ / պտուղ ըստ կարի՝ եւ յօծարութեան սրտի իւրոյ. հարուստքն զակունս / պատուականս՝ ոսկի եւ արծաթ. Այլքն պղինձ՝ փայտ՝ թել՝ մորթի՝ / մազ՝ իւղ՝ եւ խունկ: ԵԿ՝ 35. 23²¹: Սապէս եւս հարազատամիտ բարե/պաշտութիւն ձեր ըստ կարի՝ եւ յօծարութեան սրտի ձերոյ ընդ մեզ ձեռնատու / լերո՛ւք՝ զի հաստատիցի աստ եկեղեցի մի՝ իբրեւ Հարսն Քրիստոսի ի հան/դերձս ոսկէհոռոս զարդարեալ՝ եւ պանունեալ. ի միսիթարութիւն / աստ գտեալ մերազնեայ ժողովրդեանս:

ԱՐԴ՝ ով ոք յօծարական սրտիւ ընդ այս ղիտաւորութիւն բոլորապր/տուղ նուէր ինչ կամիցի մատուցանել առ ի գտանել զպատուական մար/գարիտն. եւ զԱստուած անձին իւրում բարեկամ առնել՝ գրեսցէ զանուն / իւր, եւ զֆանիս տրոցն, եւ առաքեսցէ այսր յ'Ամատրդամ ՚ի ձեռս / Սուրբանումի որդի Բաբաջանին, եւ Թէոդորոսի որդի Նիկողոսին. / որք զանուանս, եւ զնուէրս Պողաբերացն գրեսցեն ի Կոնտակի յան/ման յիշատակ պողաբերացն:

²⁰ Հմմտ. «Տո՛ւք՝ եւ տացի ձեզ. չափ բարոք թաթաղուն շարժուն զեղուն՝ տացեն ի գոգս ձեր. նովին չափով՝ որով չափէ՝ չափեսցի ձեզ»:

²¹ Հմմտ. «Եւ ամենայն այս առ որում գտանէր կապուտակ, եւ ծիրանի, եւ կարմիր մանեալ, եւ բենեզ. եւ մազ այծեաց. եւ մորթս խոյոց կարմիր ներկեալ. եւ մորթս կապուտակեալ»:

ՔԱՆԶԻ աստ եղեալ Հայկազնեայ ժողովրդեան հաւասար հա/ւանութեամբն, եւ միաբան հանութեամբն վերոգ[ր]եալ Բաբաշանն՝ եւ / Նիկողոսն կարգեալ հաստատեցան Հոգաբարձոն՝ Վերակացոն / եւ Գործակալ այս եկեղեցաշինութեանս. որք եւ զայս յորդոր[ա]/կան՝ եւ հրաւիրական թուոյս հաւանութեամբ աստ եղեալ մերազնեայ / անուանի վանառականացն Ձեր Բարեպաշտութեանդ յանդիման / կացուցանեն. Ողջ լերոնք:

/ յ'Ամստրդամ. յԱմի Տեառն 1714:

/ Թիւ մեր 1163. Յունվար 1:

Վանառականն մամմօնային.

երբ է խոհեմ ըստ վանաոին.

զաւագն փոխէ ընդ մարգարտին.

ըզլարժեկին ընդ անշարժին:

GEVORG TER-VARDANYAN

ANNA MARIA MATTAAR

A NEWLY DISCOVERED OLD ARMENIAN PRINTING

While researching the Armenian old printing books of the Royal Library of The Hague, Anna Maria Mattaar found an unknown 4-page text in a copy of the Psalms published in the printing house of Ghukas Vanandetsi in 1714–1715 in Amsterdam. The text is not related to the Psalms. It is a circular "Letter of Exhortation" ("Մ'ղտ' հօրօրական") published in the same printing house in 1714, which urges the addressees to participate in the fundraising for building the Armenian Church of the Holy Spirit in Amsterdam. The authors are "Babajan, son of Sultanum, and Nikoghos, son of Theodoros," the trustees, overseers and agents of the construction of the church.

Since a unique copy of this printed document is preserved and it witnesses to an important page in the life of the Dutch-Armenians, namely the construction of the Church of the Holy Spirit, the "Letter of Exhortation" is published here together with a photographic reproduction. For the history of Armenian printing, it is very important to search in archives, supply bibliographic information and, if necessary, republish such texts related to everyday issues, printed in small numbers and often not spread outside the places of printing.

**ГЕВОРГ ТЕР-ВАРДАНЯН
АННА МАРИЯ МАТТААР**

НОВОНАЙДЕННОЕ СТАРОПЕЧАТНОЕ АРМЯНСКОЕ ИЗДАНИЕ

Исследуя армянские старопечатные книги Гаагской Королевской библиотеки, Анна Мария Маттаар в одном экземпляре Псалтири, изданной в 1714-1715 гг. в Амстердамской типографии Гукаса Ванандеци, обнаружила не связанное по содержанию с Псалтирью неизвестное издание. Это состоящее из четырех страниц циркулярное “Наставительное письмо”, вышедшее из той же типографии в том же 1714 г. и призывающее адресатов принять участие в сборе средств, необходимых для строительства армянской церкви Святого Духа в Амстердаме. Авторами этого циркуляра были попечители, смотрители и подрядчики строительства церкви, “Бабаджан, сын Султанума” и “Никогос, сын Теодороса”.

Учитывая тот факт, что этот печатный документ сохранился в единственном экземпляре, а также его роль в жизни голландских армян и истории строительства церкви Святого Духа, “Наставительное письмо” публикуется как в виде текста, так и в фотографическом воспроизведении. Для истории армянского книгопечатания в целом очень важно разыскивать в архивах, библиографически обрабатывать и при необходимости публиковать подобные издания, посвященные повседневным вопросам, размноженные небольшим тиражом и часто не выходившие за пределы мест их напечатания.